

ՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԲԱՌԵՐ ԹԷՈՆԻ ՄԵՋ

Թէոն Ալեքսանդրացին հույն մատենագիր է, որ ապրել է շուրջ 270 թվին (Bailly, Dict. gr.—franç. 6-րդ տպ. էջ XXIX): Նա դրել է ճարտասանական վարժությունների մասին մի գիրք, որ տպագրված է Եվրոպայում մի քանի անգամ (1832, 1834, 1854 թվերին): Մեր աշխատասեր նախնիք թարգմանել էին այս աշխատությունը՝ VI դարում, բայց ձեռագիրը կորել էր: Մի քանի տարի առաջ մեր Մատենադարանում գտնվեց այն և հրապարակվեց Հ. Մանանդյանի կողմից: Գիրքը հրատարակեց ՀՍՍՌ-ի Պատմության և գրականության ինստիտուտը (Երևան, 1938):

Հրատարակության վերջում (էջ 198—203) դրված է գրքում գտնված նորագյուտ բառերի ցանկը, որոնց քննության է նվիրված այս հոդվածը:

1. Ազանցեալ «ընտիր, ազնիվ». այս բառը հայ մատենագրության մեջ ուրիշ տեղ դորձածված չէ և գտնվում է միայն Թէոնի մեջ, էջ 142, երկու անգամ, միևնույն պարբերության մեջ. «Եւ երկրորդ յեղանակ է, յորժամ ոչ մի կամ երկուս զառաւել աղանցետլս ընդ առաւել աղանցեալս բաղդատիցիմք»:

Ազանցեալ «ճեով բառ գոյությունն հունի և չի էլ կարող ունենալ. թյուրիմացությունն է մի այդպիսի բառ ենթադրել. Թէոնի մեջ:

Գիտենք, որ Թէոնի թարգմանիչը բացարձակ ճշտությամբ, գրեթե բոլոր բառ թարգմանում է իր առաջ դրված հույն բնագիրը. ուստի դենք վերի պարբերությունը իր բնագրի հետ դեմ առ դեմ:

Յորժամ ոչ մի կամ երկուս

ծταν μὴ μίαν ἢ δύο

զառաւել աղանցեալս ընդ առաւել աղանցեալս բաղդատիցիմք.
τῶν ἐξοχωτάτων τοῖς ἐξοχωτάτοις παραβέλλωμεν

Տեսնում ենք, որ բոլոր բառերը, հայերեն և հունարեն, իրենց համապատասխանները ունին իրար դեմ. միայն դժբախտ առաւել բառն է, որ երկու անգամին էլ մենակ է մնում: Միթե Թէոնի թարգմանիչը ավելորդ տեղը իրանից հնարեց ու ներմուծեց այդ բառը բնագրի մեջ երկու անգամ: Ոչ: Պետք է կարդալ միայն առաւելազանցեալ, որ կազմված է ճիշտ այնպես, ինչպես գերազանցեալ, և անսովոր չէ հին հայ մատենագրության մեջ, ուր ունինք առաւելագոյն և առաւելագոյնութիւն ձեւեր:

Այսպիսով ջնջվում է ենթադրյալ ազանցեալ սխալ բառը և նրա տեղ գալիս է առաւելագոյն:

2. Աղուն «կծու, դառն». բոլոր հրատարակչի՝ այս բառը գործածված է մի անգամ Թէոնի մոտ, էջ 98, աղետք աղունք «դառն աղետներ»: Դժբախտաբար այս բառն էլ ծանր թյուրիմացության արդյունք է: Աղուն «կծու, դառն» անգո բառը ենթադրված պիտի լինի թուրքերեն ալուն «դառն»:

բառից. բայց ի՞նչ գործ ունի թուրքերեն բառը VI դարի հունաբան հեղինակի բերանում: Համեմատելով այդ կտորը դարձյալ հույն բնագրի հետ. կգտնենք հետևյալը.

ամենայն մարգոյ աղէտք աղունք.
πας ἐστιν ἀνθρώπος συμφορή

Այստեղ «կծու, դառն» իմաստով բառ չկա և աղունք մնում է առանձին:

Սխալ է ասել թե աղունք բառը չկա Հայկազեան բառարանում. այդ բառը գտնվում է իր սովորական տեղում, թե Հայկազեանի մեջ, թե Առձեռնում և թե իմ Արմատական բառարանում: Նշանակում է «աղէտ, եղեռն» և այսպիսով դառնում է ճիշտ հոմանիշը՝ կողքին դրված աղէտ բառի: Շատ անգամ գործածված է հունաբան դպրոցի մեջ (Պիտոյից գիրք, Փիլոն) և անծանոթ է ոսկեդարյան «անվանված» մատենագրության:

Որովհետեւ հունաբան դպրոցը հարագիր հոմանիշներ գործածելու սովորությունը չունի, ուստի ենթադրում եմ, որ թարգմանիչը գրած է եղել միայն իր սիրելի աղունք բառը և հետագայում ներմուծվել է նրա մոտ՝ ավելի սովորական աղէտ բառը:

3. Աջմայտ, գործածված է մի անգամ, էջ 116. համապատասխանում է հունարեն μελανόχροος «սևագույն» բառին: Հույն բառը բարդված է μελας «սև» և χροός χρώς «կաշի, մարմին, մարմնի գույն» բառից: Կարծում եմ, որ հայ բառն էլ պետք է կարդալ տրջնամյուն, որ կազմված է արջն «սև» և մյուն = «գույն» բառերից, երկուսն էլ ծանոթ հունաբան դպրոցին. հմմա. արջնագույն փիլ. արջնագրեւս փիլ. գմյունն ի տմնմութիւն փութեն և զգոյնս ի սգունութիւն Պիտ:

4. Բաղկել. գործածված է մի անգամ Թէոնի մոտ՝ էջ 177, հետևյալ հատվածում. «Ոչ որպէս ոմանք զպայծառսն և զմեծամեծսն թուկիղիղեայն զանց առնեն, բազկելով ի շամանդաղ քատակութենէն»: Այս հատվածի հույն բնագիրը չկա, ուստի հրատարակիչն էլ բառի նշանակությունը չի տալիս և մի հարցական դնելով անցնում է: Պետք է կարդալ բազկել, որ նշանակում է «կարճել, կրճատել, համառոտել». կազմված է սխալ հետևողությամբ հույն. βραχύνω «կարճագույն, համառոտագույն» բառի, որ պատահաբար նման է βραχύνω «բազկել» բառին:

5. Դամնդիռն

6. Մառախումն

} այս սրկուսը միասին գործածված են մի նախադասություն մեջ, էջ 177. Այս դամնդիռն և մառախումն բանին պատույնացուի: Համապատասխան հույն բնագիրը չկա, ուստի չի գրված նաև հայերեն բառերի նշանակությունը: Սակայն դամնդիռն կա Հայկազեանում, Առձեռնում և Արմատականում. նշանակում է «մթություն». գործածված է մի անգամ հայ մատենագրության մեջ (Սոփերք, հտ. Գ, էջ 20): Երկրորդ օրինակը գտնում ենք այժմ Թէոնում և կասկածելի համարված բառը ճշտվում և ստուգվում է: Իմաստը ցույց է տալիս, որ կողքի բառն էլ պետք է կարդալ մառախում:

7. Եղսեւ, գործածված է էջ 116. «Եւ տեղեաց, որդան եղտեւրաց (°), ծովեզերաց, քաղաքաց, կղզեաց, անապատից և նմանիցն». հունարեն համապատասխան ձևն է λευκώδης, որ է «թաց տեղ»: Պետք է ջնջել հայերենի մեջ հարցականը, որովհետեւ եղսեւ կամ աղսեւ շատ ընտիր հայերեն բառ

է. կա Հայկազեանում ավելի նոր եղօքէւր ձևի տակ, և նրան հոմանիշ է գրված λευκός:

8. Զիւռաւր. այս բառը մոռացված է հիշել նոր բառերի շարքում. գործածված է էջ 168. «Յորժամ հասարակ յոյժ հին կամ օտար իցէ հին (°), որդան ձիաչաւր և մերարի». համապատասխան հույն բառն է ποδοχαλκή, որ նշանակում է «ոտքի կապ». կազմված է ποῦς ποῶς «ոտք» + χαλός «չար» բառերից: Ըստ այսմ հայ թարգմանն էլ կազմել է ձիաչաւր «ձիու ոտքի կապ», որի մեջ չար՝ թարգմանված է χαλκή ձևից:

Հ. ԱՃԱՌՅԱՆ

ԱՄԻՐՏՈՎԼԱԹԻ ՈՐԴԱՏ ԲԱՌԸ

Ամիրատովաթի «Օգուտ բժշկութեան» մեջ, գլուխ ՄԲ, գործ է ածված այս բառը. — երկու ձեռագիր ունին ուրդաթ, մեկ ձեռագիր ուրդաթի, մեկ ձեռագիր ուրդու և երկու ձեռագիր էլ սաւրդաթի: Մալխասյան (տե՛ս Օգուտ բժշ. էջ 479 և հառաջաբան, էջ 17) գտնելով որ հայերեն նման բառ չկա և անսնելով որ խոսքը որթատնկի մասին է, ուղղել է այդ բառը սրբաթնկի, և այսպես էլ ժողովրդական մեջ, «չալէ՛ կրակով և քիչ մն որթատնկի (սխալ տպված ուրդաթնկի) մոխիր խառնէ և եփէ որպէս մորհամ»:

Ըստ իս սրբաթնակ ուղղումը ճիշտ չէ: Ուրդաթ բառը կա հայերեն, միայն պետք է ուղղել ուրդաթ > ուրդոթ, այն է սրքոթ, որ նշանակում է «որթատնկի յօտած կտրված ավելորդ ճյուղերը, որ վառելու համար են գործածում» (այն՝ ինչ որ Երևանում կոչվում է սրքաւո): Այս սրքոթ բառը գործածական է մի խումբ բարբառներում. այսպես՝ Այնթապ, Բազար-գեղ, Խարբերդ, Հաղրո, Մաշկերտ, Չենկիլեր, Սթանոյ, Սիվրիհիսար, Տիգրանակերտ, Կղի (տե՛ս իմ Գավառական բառարանը, էջ 863): Անշուշտ ոչ մի մարդ էլ ամբողջ որթատնկը չի այրել, այլ միայն ավելորդ ճյուղերը կամ արքատները, որ է սրքոթ:

Հ. ԱՃԱՌՅԱՆ

В этих двух статьях автор уточняет значение девяти армянских слов: одно слово из Амир-Довлата — *որդաթ*, а остальные из Теона — *աղան-գեալ*, *աղուն*, *աջմայա* и т. д. Автор определяет значение этих слов — первое посредством армянских диалектов, а остальные сравнительно с греческим подлинником.

Г. АЧАРЯН